Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ *«Երեւանի հ. 9 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի *«Խոհարարի», «Հրուշակագործի», «տրանսպորտային միջոցների շահագործման եւ նորոգման», «ԷՀՄ տեխնիկական սպասարկման եւ նորոգման»* վարպետի թափուր տեղերի համար:

Թափուր պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ հաստիքացուցակի եւ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեւ 1),

2. Փաստաուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձեւ 5),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)

6. Մեկ լուսանկար՝ 3 X 4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ***օգոստոսի 31-ից մինչեւ սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 15-ին՝ ժամը 14:00-ին,*** *«Երեւանի հ. 9 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Երեւան Վարդաշեն 6 փ. 66 շ.:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 45-43-65, (077) 01-02-90 հեռախոսահամարներով: